# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Ա-107 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ | Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ | վերնաշապիկներ | Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ | Վերնաշապիկ կարճաթև կապտասև Midnight Navy #0a031d Color Palette կամ Hex Code #191970 գույնի կտորից, 67% բամբակ և 33% պոլիէսթեր, քաշը 1մ2 180 գ, ±3%, ուսադիրներով և ծալովի օձիքով: Ուղիղ ձևվածքով՝ տաբատի մեջ դրվող կամ վրան դրվող՝ առանձգական ժապավենով է համաձայն պատվիրատու ստորաբժանման պահանջներին: Առաջամասերին մշակված են ձևավոր կափույրներով վրադիր գրպաններ, որոնք կոճկվում են մեկ օղակ-կոճակով և վերևի մասում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ունեն 3 սմ բացվածք՝ տեսախցիկի ու ռադիոկայանի խոսափողի համար: Ձախ կողային կարի վրա կա բացվածք, ինչպես նաև ձախ գրպանի մեջ՝ ալեհավաքի լարի անցկացման համար: Ուսամասից մինչև թևքի տակ կարվում է կրկնակի կտոր: Վերնաշապիկի առաջամասերին մշակվում է վրադիր, կրկնակի կտոր, որի վրա մշակվում են օղակներ և կարվում կոճակներ: Առաջամասը ունի երկու արտաքին կարեր, իսկ թիկունքը ամբողջական է և երկայնքով ունի երեք արտաքին կարեր: Թևքերի երկարությունը մինչև արմունկ՝ մշակված թեզանիքով: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության թևքանշան՝ ջակարդով ասեղնագործած: Թիկունքի վերևի մասում կարվում է ներդիր, որի վրա կպչուն ժապավենով ամրանում է սպիտակ գույնով ջակարդով ասեղնագործված 28x7,5սմ «POLICE», իսկ աջ կրծքամասում կարվում է ներդիր, որի վրա կպչուն ժապավենով ամրանում է 13x2,5սմ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» մակագրությամբ բառերը: Ձախ կրծքամասում կարվում է կրծքանշանի ներդիր: Վերնաշապիկը ունի 2-3 օդանցքեր` շնչողունակությունն առավելագույնին հասցնելու համար: Ուսադիրները կարվում են նույն կտորից, վերնաշապիկի չափսի համապատասխան երկարությամբ և 45 մմ լայնությամբ: Ուսադիրները օձիքի մասում կոճկվում են մուգ կապույտ պլաստմասե կոճակով, իսկ ուսերի մասում կարված են: Փաթեթավորումը` Տեսականին 5 հատ` պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ` 1 հատ: Վերնաշապիկը պիտակավոռառավելագույնրված, որի վրա պետք է նշված լինի չափսը, արտադրող կազմակերպության անվանումը և լվանալու պայմանները: Մատակարարի կողմից ներկայացվում է կտորի գույնի և բաղադրության հավաստիության վերաբերյալ փաստաթուղթ, ինչպես նաև օգտագործված բոլոր նյութերի մասին տեղեկատվություն, որը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | տրվում է արտադրողի կողմից: Պատվիրատուն տրամադրում է հաստատված և կնքված նմուշ: Նմուշը ստորագրում է մատակարարը, համաձայնեցվում է պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի հետ, որը հաստատվում կամ մերժվում է վերջինիս կողմից: Ապրանքատեսակները պետք է լինեն նոր և չօգտագործված: Պարտադիր, մատակարարի հաշվին կատարվում է լաբորատոր ստուգում: Չափսերը համաձայնեցնել պատվիրատուի հետ, որոնք տրամադրվում են մատակարարումից առնվազն 20 օր առաջ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Ա-107 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |